ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՋՈՐՋ ՆՈՐՈՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃՈՐՃ ՆՈՐՈՅԵԱՆ, ՈՐ Ի ՖՐԵԶՆՕ, ԱՄՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք Ձեզ եւ յղում Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ցարգարժան պրն Նորոյեան, բարձրօրէն գնահատում ենք ծնողներից ժառանգած Ձեր եկեղեցասէր ու հայաշունչ ոգին, որն արտայայտում էք աստուածահաճոյ կեանքով ու բարի գործերով՝ դասնամեակներ շարունակ Ձեր նպաստը բերելով ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի ազգային-եկեղեցական կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Յատկապէս գոհունակութեամբ ենք անդրադառնում իշխանական Ձեր ազնիւ նուիրատուութիւններին՝ ի նպաստ Տիրախնամ թեմի Առաջնորդարանի եւ Ամառային ճամբարի շինութեան, ուր պիտի կառուցուի նաեւ «Նորոյեան կենտրոնը»: Ուրախ ենք, որ երիտասարդ հայորդիները հնարաւորութիւն պիտի ունենան ամառային իրենց հանգիստը միատեղ կազմակերպել Տիրախնամ թեմի հովանու ներքոյ գործող Ամառային ճամբարում՝ իրենց հոգիներում մշտապէս ապրեցնելով երախտագիտութեան ազնիւ զգացումը պատուարժան հայորդուդ հանդէպ:

Ազգային-եկեղեցական կեանքում Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Գերաշնորհ Տ. Վահէ արքեպիսկոպոս Յովսէփեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ Մայր Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ ձեռնարկներով՝ ի զօրացումն համազգային մեր կեանքի:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Ապրիլի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 156